# Տ. ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 սեպտեմբերի 2008 թ.)

*«Երբ որովայնում չստեղծած Ես ընտրեցի քեզ*
*և դեռ արգանդից դուրս չեկած սրբացրի քեզ»:*
(Երեմիա Ա 5)

Սիրելի բարեպաշտ հայորդիք, մարգարեական այս տողերը վերաբերում և պատշաճում են Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնին և բոլոր այն մարգարեներին, առաքյալներին և քրիստոնյաներին, ովքեր կենդանի Աստծո հետևորդներն են: Սուրբ Կույսին նվիրված օգոստոսյան և սեպտեմբերյան տոները Հայ Եկեղեցին մեծ խանդավառությամբ է տոնում: Վաղը Սուրբ Կույս Մարիամի ծննդյան փառավորյալ տոնն է: Սուրբ Աննայից և սուրբ Հովակիմից ծնվածով օրհնվեցին երկրի բոլոր ազգերը, և Իր ծնունդով կատարվեց Աստծու խոստումը՝ տրված նահապետներին և մարգարեներին:

Աստվածամոր ծննդյան լուրը տարածվեց ամբողջ Հրեաստանում, և բոլոր լսողներն օրհնեցին կենդանի Աստծուն, ինչպես մարգարեացել էր Եսային Սուրբ Կույսի և առաքյալների մասին. «Պիտի ճանաչվի նրանց զավակը ազգերի մեջ, և նրանց սերունդները՝ ժողովուրդների մեջ: Ամեն տեղ երբ տեսնեն, պիտի ճանաչեն նրանց և ասեն. «Սրանք Աստծու օրհնյալ զավակներն են»: Եվ ցնծությամբ պիտի ուրախ լինեն ի Տեր»: Եթե Աստծո մարգարեները, առաքյալները աշխարհի լինելուց առաջ ընտրվեցին, Աստված ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով, նախքան աշխարհի արարումը, որպեսզի մենք սուրբ և անարատ լինենք Նրա առաջ սիրով, ապա որքան առավել Սուրբ Կույսն է ընտրյալ, ով կոչվում է դրախտ աստվածային և արևելք իմանալի և ում մասին ասում է Սողոմոնը. «Շատ դուստրեր հարստություն ձեռք բերին, շատերն էլ սխրագործություններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց և անցար բոլորից: Քո մեջ կանացի կեղծ բարեհաճություն չկա և ոչ էլ սին գեղեցկություն»:

Դարեր շարունակ սուրբ Աստվածածնի այս առաքինություններին են հետևել մեր մայրերն ու քույրերը, փորձել են նմանվել իրենց վարքով ու կենցաղով՝ քաջ գիտակցելով, որ դա խաչի մի ճանապարհ է իրենց համար: Սուրբ հայրերի բազմաթիվ գրվածքներում ահա թե ինչպես է նկարագրվել Սուրբ Կույսը: Աստվածամոր միջոցով Խաչը ծագեց աշխարհում որպես զորության գավազան և կնիք ամենքի համար: Նրա միջոցով բացվեց կենաց ծառի ճանապարհը, վերցվեց բոցեղեն սուրը և հաստատվեց Մկրտության Ավազանը: Նա եղավ եդեմական շնչավոր դրախտ, որտեղից բխեց մեր Տեր Հիսուս Քրիստոս կենաց աղբյուրը՝ չորս գետերի բաժանված, ինչն ավետարանիչների քարոզչությունն է աշխարհի չորս կողմերում՝ լցված հավատով ու Սուրբ Հոգով: Սրբուհին եղավ Նոյյան տապան: Եվ եթե այն տապանը միայն մի ընտանիք ազատեց ջրհեղեղից, ապա Կույսի միջոցով ողջ աշխարհը փրկվեց:

Նա եղավ անկեզ մորենի, քանի որ Աստվածության հուրը բնակվեց նրա սուրբ որովայնում և չայրեց: Սուրբ Մարիամը ուխտի տապանակն է, որն իր մեջ կրեց կենդանի Աստուծո բանը, Ով ոչ միայն Իսրայելի որդիներին Սինայի անապատից դեպի Ավետյաց երկիրն առաջնորդեց, այլ ամբողջ մարդկային ցեղը՝ դեպի երկնային Երուսաղեմ:

Ամենասրբուհի Կույսը եղավ արևելք, որտեղից ծագեց արդարության Արեգակը և հալածեց մեր հոգիներից խավարը և անստվեր Լույսն առաքեց մահվան ստվերներում նստածներիս: Սուրբ Աստվածամայրն այն ոսկյա սափորն է, որն իր մեջ կրեց Հոր անժամանակ Խոսքը, կենաց Մանանան, որով ոչ միայն Իսրայելին կերակրեց, այլև ամբողջ աշխարհին: Սուրբ Կույսն ավելի վեր է, քան մարգարեները, առաքյալները, նախահայրերը, մարտիրոսներն ու վարդապետները և վեր, քան իշխանություններն ու պետությունները, սերովբեներն ու քերովբեները և ավելի վեր է բարձրացել, քան երկնային զորքերը: Ձիջում է նա միայն Արարչին, անեղ բնությանը, գերազանց և անեղնույթ Աստվածությանը: Սուրբ Կույս Աստվածածնի միջոցով ներվեց Ադամի անեծքը, և փարատվեց Եվայի տաժանելի երկունքը:

Սիրելի բարեպաշտ կանայք, թող Աստված Սուրբ Կույս Աստվածածնի ծննդյան հրաշալի խորհրդով Հայաստան աշխարհին պարգևի արժանավոր մանուկներ մեր երկրի ու Եկեղեցու համար: Բարեպաշտ քրիստոնյա հետևորդներ, ովքեր ժառանգելու են իրենց հայրերի Ավետյաց երկիրը, թող Աստվածածնի բարեխոսությամբ, Հայր Աստծու սերը, Տեր Հիսուս Քրիստոսի խաչի և հարության զորությունը և Սուրբ Հոգու առաջնորդությունը մեզ բոլորիս հետ լինի, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն: